ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2024Թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկամուտներ

Մասիս համայնքի 2024թ. բյուջեի վարչական մասի եկամուտների տարեկան 4 915 625 800 դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 2 362 133 067 դրամ, կամ 1-ին կիսամյակի մուտքերի առաջադրանքը կատարվել է 48,1 %-ով, որից սեփական եկամուտների առաջադրանքը՝ 1 803 087 700 դրամի դիմաց կատարվել է 806 373 667 դրամ կամ կատարվել է 44,7 %-ով՝ :

1.Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված 1 296 874,4 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 500 134,3 հազար դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 38,6 %-ով, այդ թվում անշարժ գույքի հարկի առաջադրանքը կատարվել է 33,6 %-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 35,0 %-ով, տեղական տուրքերը՝ 96,8 %-ով, պետական տուրքերը՝ 70,1 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը՝ տարվա համար նախատեսված 90 846,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 87 950,6 հազար դրամ:

Պետական տուրքերի առաջադրանքը նախատեսված 20 000,0 հազ. դրամի դիմաց փաստացի կազմել է 14 010,2 հազար դրամ:

2.Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի և սուբվենցիայի գծով փաստացի մուտքերը կազմել են 1 554 160,2 հազար դրամ:

3.Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը նախատեսված 510 211,3 հազար դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 307 838,58 հազար դրամ, կամ կատարվել է 60,3 %-ով, նույն թվում՝

հողերի վարձակալությունից եկամուտները՝ 56,9 %-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 108,9 %-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը կազմել են 1 599,2 հազար դրամ՝ 3 998,0 հազար դրամի դիմաց :

4. **Տեղական վճարների մասով** բյուջեում նախատեսված 406 583,6 հազար դրամի դիմաց գանձումները կազմել են 182 344, 96 հազար դրամ կամ կատարվել է 44,8 %, որից աղբահանության վճարների մասով 168 050,0 հազար դրամի դիմաց գանձվել է 82 048,6 հազար դրամ կամ կատարվել է 48,8 %-ով: Համայնքի պատվերով՝ մանկապարտեզների և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով գանձումը կատարվել է 38,8 %-ով:

Ծախսեր

2024 թ. համայնքի բյուջեի վարչական մասի 1-ին կիսամյակի ծախսերը կատարվել են 33,6 %-ով՝ 4 915 625,8 հազար դրամ առաջադրանքի դիմաց կատարվել է 1 654 128,03 հազար դրամ, որից՝ ծախսերն ըստ ծրագրերի կատարվել են՝

ա/ Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կատարվել է 33,5 %-ով:

բ/ Տնտեսական հարաբերությունների ոլորտում նախատեսված ծախսերը կատարվել է 64,2 %-ով:

գ/ Շրջակա միջավայրի պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 43,6 %-ով:

դ/Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 51,1 %-ով:

ե/Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգումով ծախսերը կատարվել է 38,76 %-ով:

զ/Կրթության ոլորտի համար բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել է 42,87 %-ով:

է/Սոցիալական պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 31,3 %-ով:

Մասիս համայնքի 2024թ. բյուջեի ֆոնդային մասի մուտքերը տարվա համար նախատեսված 4 886 988,6 հազար դրամի դիմաց կատարվել է 1 483 986,1 հազար դրամ, որից տարեսկզբի մնացորդը՝ կազմել է 850 087,616 հազար դրամ, գույքի և հողի իրացումից մուտքերը՝ 437 949,1 հազար դրամ, կապիտալ պաշտոնական դրամաշնորհներ՝ 94 965,97 հազար դրամ և այլ մուտքեր՝ 100 983,5 հազար դրամ:

2024 թ. բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կազմել են 921 911,9 հազար դրամ, որից՝

ա/ Համայնքի մի շարք բնակավայրերում ոռոգման համակարգերի հիմնանորոգման համար 186 033,6 հազար դրամ, գազաֆիկացման աշխատանքների համար՝ 96 201,2 հազար դրամ, համայնքային ճանապարհների հիմնանորոգման համար՝ 448 371,7 հազար դրամ, բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման համար՝ 78 565,8 հազար դրամ, ջրագծերի հիմնանորոգման համար՝ 2 024,0 հազար դրամ, համայնքի գրեթե բոլոր բնակավայրերի փողոցների լուսավորության համակարգի կառուցման համար՝ 34 373,8 հազար դրամ, համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցման, հիմնանորոգման համար՝ 23 595,2 հազար դրամ,

բ/ համայնքապետարանի, համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների համար վարչական սարքավորումների, գույքի, մեքենաների, ջրատաքացուցիչների, արևային ֆոտովոլտային կայանների և անվտանգության ապահովման սարքերի ձեռք բերման համար ծախսերը կազմել են 46 641,9 հազար դրամ,

գ/ Համայնքում նոր կառույցների գործարկման նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռք բերման համար ծախսերը կազմել են 6 104, 9 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ